Արձանագրություն N 2

«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2021-105» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«29» դեկտեմբերի 2021 թ. ժամը 10:30-ին

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի.
Նախագահ՝ Մ. Երիցյան
Անդամներ՝ Ա. Սահակյան, Ռ. Առաքելյան
Քարտուղար՝ Ա. Վիրաբյան
Բացակայում է.

Օրակարգ.

**«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2021-105» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի անցկացում և արդյունքների հաստատում**

**Ընդունել ի գիտություն, որ՝**

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել և հիմնավորումներ չեն ներկայացվել:

1. **«ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2021-105» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ.**
   քարտուղարի կողմից 10:30-ին հայտերի գրանցամատյանը փակելուց հետո, նախագահը հրապարակել է նախահաշվային գները:
2. **Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ | ՀՀ, ք. Երևան, Ազատության պող., 24/1, հեռ. 010-700-700, e-mail: corp_tender@beeline.am |

3. **Տվյալներ ծրարը կազմելու, ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին և բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**
   մասնակից ընկերության կողմից ներկայացված ծրարները կազմված են «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2021-105» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
   Փակ կնքված ծրարով «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ ընկերությունը ներկայացրել է.
   - դիմում-հայտարարություն գնանշման հարցման մասնակցելու (իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը նշված է),
   - գնային առաջարկ:

Վերոնշյալ կազմակերպության ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

4. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.**
   Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2021-105» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
5. **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ /ՀՀ դրամ/.**
   Ընթացակարգի հրավերով սահմանված կարգին բավարարող մասնակիցների գնային առաջարկները.

| չ/հ | Ծառայության անվանումը | Նախահաշվային գինը (ՀՀ դրամ) | Քանակ | «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Մասնակցի գնային | Մասնակցի գնային |

| | | | | առաջարկը առանց ԱԱՀ (ՀՀ դրամ) | առաջարկը ԱԱՀ-ն ներառյալ (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ինտերնետային կապի ծառայություն | 650,000 | 1 | 541,665 | 649,998 |
| 2 | Առանձնացված վիրտուալ ցանցի կենտրոնացված հանգույցի ծառայություն | 3,400,000 | 1 | 2,759,250 | 3,311,100 |

6. **Գնային բանակցությունների վարման վերաբերյալ.**
Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի և «Գնումների մասին» օրենքի 38-րդ հոդվածի, վերոհիշյալ կազմակերպության հետ վարվել է գնային բանակցություն, որի արդյունքում նոր առաջարկ ստացված չէ:
7. **Գնահատման արդյունքների վերաբերյալ.**
Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքները ներկայացվել են գնահատման թերթիկում:

Որոշում.

1. №№ 1-2 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ին:
2. Համաձայն «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի, անգործության ժամկետ չի սահմանվում, հետևաբար, պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել՝ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ ընկերությանը՝ 3,961,098 /երեք միլիոն ինը հարյուր վաթսունմեկ հազար իննսունութ/ ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ ԱԱՀ-ն:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Ստորագրություններ.
Գնահատող հանձնաժողովի
Նախագահ՝ ____________ Մ. Երիցյան

Անդամներ՝ ____________ Ա. Սահակյան

____________ Ռ. Առաքելյան

Քարտուղար՝ ____________ Ա. Վիրաբյան